




Հ Ա Ն Ք Ի Ս Տ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ԱՎԱԳՔԱՆԱՔԻՆՍԻԱՆԻ

(1882—1966)

Սեպտեմբերի 23-ին, Բուխարեստում, խոր ծերության հասակում, ի Տեր հանգյալ արժանապատիվ Տ. Իգնատիոս ավագ քահանա Քիլիմյանը:

Հանդուցյալը ծնվել է 1882 թվականին՝ Կեսարիայի էվերեկ գավառում՝ աստվածապաշտ ընտանիքում: Նա իր սկզբնական կրթությունն ստացել է տեղի Ռուբինյան դպրոցում:

1906 թվականին նա ձեռք է բերում ատամնաբույժի մասնագիտություն և մեկնում Բրուսա աշխատելու:

1910 թվականին քահանա է ձեռնադրվում գեր. Տ. Հովհաննես արքեպիսկոպոս Արշարունուց:

Տ. Իգնատիոս քահանան սիրով և նվիրումով ծառայում է իր հոտին:

Մեծ նշանի ընթացքում հրաշքով աղատվում է Տ. Իգնատիոս քահանայի ընտանիքը և հաստատվում Դամասկոսում:

Զինադադարից հետո Տ. Իգնատիոսն իր ընտանիքով կրկին վերադառնում է Բրուսա, որտեղ և շարունակում է իր հովվական պաշտոնը:

1922 թվականին, իր փափագի համաձայն և լուսահոգի Տ. Զավեն պատրիարքի հրամանով, Տ. Իգնատիոս քահանան հաստատվում է Ռումինիայի Կալաց քաղաքում և պաշտոնավարում այնտեղ չորս տարի, որից



հետո ստանձնում է Յաշ քաղաքի հովվությունը:

1931 թվականին Ռումինիայի առաջնորդ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրապյանի հրավերով Տեր հայրը պաշտոնավարում է

Բուխարեստում և միաժամանակ դասավանդում հայկական դպրոցում:

Իր 55-ամյա եկեղեցական գործունեության ընթացքում Ս. Իգնատիոս ավագ քահանայն հայ եկեղեցու արժանավոր հովիվներից մեկը հանդիսացավ՝ ամենուրեք վայելելով բոլորի համակրանքն ու ղնահատանքը:

1920 թվականին Ջավեն պատրիարքի կոնդակով ստանում է ծաղկյա փիլոն կրելու իրավունք: 1943 թվականին Կարապետ արքեպ. Մաղլմյանից ստանում է քահանայական լանջախաչ կրելու իրավունք: 1944-ին Մեսրոպ Նարոյան պատրիարքից ստանում է ավագ քահանայության պատիվ:

1960 թվականին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Ս. Իգնատիոսի եկեղեցանվեր գործունեության և քահանայության

50-ամյակի կապակցությամբ, ս. կոնդակով իր բարձր գնահատանքն ու օրհնությունն է շնորհում նրան:

Սեպտեմբերի 25-ին, կիրակի օրը, Բուխարեստի հայոց առաջնորդանիստ մայր եկեղեցում, հոծ բազմության ներկայությամբ, պատարագեց, քարոզեց և հանդուցյալի վերջին օծումը կատարեց թեմի առաջնորդ, գեր. Տ. Տիրայր եպս. Մարտիկյանը՝ շրջապատված քահանայական դասով:

Ս. Իգնատիոս ավագ քահանայի կորուստով ոչ միայն Բուխարեստի հայ համայնքը, այլև բովանդակ ու միանահայությունը կորցնում է իր արժանավոր և անձնվեր հովիվը:

Հավիտենական հանգիստ՝ իր հոգնած մարմնին և խաղաղություն՝ իր հոգուն:

«Յիշատակ արդարօց օրհնութեամբ եղիցի Ամէն»:

